ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար դատավորների պատմուճանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «29» մարտի 2022թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝
Վահագն Հարությունյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝
Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար
Նելա Մուրադյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար
Վարդան Կարապետյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարարի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝
Արուս Խաչատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/12» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

- հայտերը ներկայացնելու վերջնաժամկետ է սահմանվել ընթացակարգի հայտարարությունը և հրավերը eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) հրապարակվելու օրվանից հաշված 7-րդ օրվա (25.03.2022թ.)՝ ժամը 15:00-ն.
- հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով,
- էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 28.03.2022թ.՝ ժամը 15:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գների վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գնման հայտով սահմանված գինը՝ մեկ թվով արտահայտված /ՀՀ դրամ/
1	Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան)	6387920
2	Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան)	3629500
3	Արտադրական հատուկ հագուստ (դատավորի պատմուճան)	2177700

3. Էլեկտրոնային ձևով՝ Համակարգի միջոցով հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Մասնակցի գործունեության հասցեն

4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

Հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-22/12» ծածկագրով հակադարձ աճուրդի արդյունքները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը (անունը)	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ
		Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	Արժեք ՀՀ դրամ	ԱԱՀ	Գին ՀՀ դրամ	
1	Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	6387920	0%	6387920	6324040.8	0%	6324040.80	
1	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	100000000	0%	100000000	100000000	0%	100000000.00	Մերժված
2	Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	3629500	0%	3629500	3593205	0%	3593205.00	
2	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	100000000	0%	100000000	100000000	0%	100000000.00	Մերժված
3	Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ	2177700	0%	2177700	2155923	0%	2155923.00	
3	ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ	100000000	0%	100000000	100000000	0%	100000000.00	Մերժված

Էլեկտրոնային հակադարձ աճուրդն ավարտվել է՝ աճուրդն ամփոփվել է 28.03.2022թ.՝ ժամը 15:32-ին և

- 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ն Համակարգի կողմից համարվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից:

7. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում հրավերով պահանջվող փաստաթղթի առկայության մասին.

Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտում առկա է հրավերով պահանջվող փաստաթուղթը /էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1)/:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

8. Տվյալներ՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի /հայտում առկա փաստաթղթի, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ-ի կողմից

- ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում է բավարար.
- 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան և գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի վերաբերյալ.

9.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով **Գայանե Հակոբյան Գևորգի Ա/Ձ**-ին հայտարարել ընտրված մասնակից:

9.2 1-ին, 2-րդ, 3-րդ չափաբաժինների մասով՝ ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գները, ուստի նշված չափաբաժինների մասով ՊԵՏԳՆՈՒՄՆԵՐ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից համարվել է մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովը որոշեց գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վահագն Հարությունյան

Անդամներ՝

_____ Արթուր Ասատրյան

_____ Նելա Մուրադյան

_____ Տիգրան Զեյնալյան

_____ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝

_____ Արուս Խաչատրյան